№ 48. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4. 1875 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 № 48.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 5. րուբլի, կէս տարվանը 3 րուբլի.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ."

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառից մի կոպէկ.

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի 1876 Թ. նոյն պրօգրամայով և ձևով

Տարեկան գինը 5 րուբլ

Կէս տարվանը 3 „

Բացի խմբագրատանից կարելի է գրվել և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, редакція „Мшакъ"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կլուբների կամ ժողովների նշանակութիւնը.—Ներքին տեսութիւն. Հայերի կրօնափոխութեան առթիւ. Նամակ Մոսկվայից. Նամակ Մօզդօկից. Նամակ Գերբէնդից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Նամակ արբգից. Արտաքին լուրեր.—Խառն լուրեր.—Յայտարարութիւններ.—Տեղեկացոյց.

ԿԼՈՒԲՆԵՐԻ ԿԱՄ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Առիթ ունենալով այս օրերս այցելութիւն անել Թիֆլիսի գերմանական Կօլօնիայի արհեստաւորների ժողովին, մենք կուզէնայինք մի քանի խօսք ասել այդ հիմնարկութեան վերաբերութեամբ։

Այդ մի շատ գովելի յատկութիւն է, որ գերմանացի գաղթականները, զետեղվելով ուրիշ երկիրներում, աշխատում են պահպանել իրանց հայրենիքի բոլոր սովորութիւնները, իրանց մայր-երկրից իրանց հետ բերում են դարերով ընդունված աւանդութիւնները։

Գերմանացին ուրեղ որ զետեղվում է, իսկոյն հիմնում է՝ եկեղեցի, ուսումնարան և ժողովվելու տեղ։ Այդ ժողովվելու տեղը կարող է զանազան անուններ կրել, այդ տեսակ ընկերութիւն կարող է հասարակութեան այս կամ այն դասակարգի անդամներից յատկապէս, կամ հաւասարապէս այլ և այլ դասակարգերի անդամներից բաղկացած լինել,—բայց նրա նշանակութիւնը և նպատակը նոյն է մնում։ Այդ տեսակ տեղերում անդամները հաւաքվում են 'ի հարկէ որ աշխատանքից ազատ ժամանակ ուրախ կերպով անցկացնեն, բիլեարդ կամ ուրիշ փոքրիկ խաղեր խաղան (Թղթախաղը մեծ մասամբ արգելված է լինում), լրագիրներ կարդան, իրանց մէջ տեսնվեն, խօսեն, գալիս են այդտեղ իրանց ընտանիքներով ու ժամանակ առ ժամանակ պար գան,—բայց երբէք չեն մոռանում միացնել այդ տեսակ ժողովների հետ և լուսաւորութեան գործը։ Այդ տեսակ ժողովների գոյութեան պայմաններից մէկը լինում է միշտ անդամների իրանց մէջ փոխադարձ լուսաւորութիւնը։ Այդ տեսակ ժողովներում լինում են անպատճառ գրականական երեկոներ, հրապարակական դասախօսութիւններ։

Համեմատենք Թիֆլիսի գերմանացի արհեստաւորների փոքրիկ ժողովը մեր քաղաքի այլ ժողովների և կլուբների հետ։

Մեր յիշած գերմանական ժողովի բնակարանը մեծ չէ՝ նա բաղկացած է մի չորս կամ հինգ փոքրիկ, բայց մաքուր և կարգի դրած սենեակներից՝ մէկի մէջ հաւաքվում են անդամները լրագիրներ կարդալու, իրանց մէջ խօսելու, մի բաժակ գարեջուր կամ գինի խմելու, գուցէ Թեթև ընթրիք անելու համար, միւս սենեակում կայ մի բիլեարդ, իսկ սենեակներից ամենամեծի մէջ դրած է մի պիանօ մի ծայրում, իսկ միւս ծայրում մշտական մի ամպիոն։ Այդ դահլիճում պար են գալիս, լինում են ընդհանուր ժողովները և հրապարակական դասախօսութիւններն են կարդվում զանազան առարկաների վրա։

Մեր տեղական հասարակութիւնը կամենում է ամեն բանում եւրոպական կեանքի օրինակին հետևել, բայց ըմբռնում է եւրոպական կեանքի միայն արտաքին կողմերը, եւրոպական ձևերը,—առանց աշխատելու եւրոպացի հիմնարկութիւնների, սովորութիւնների և աւանդութիւնների խորհուրդն ըմբռնելու....

Մեզանում, օրինակ Թիֆլիսում, կան բազմաթիւ կլուբներ, ժողովներ հասարակութեան զանազան դասակարգերի,—բայց մեծ մասամբ նրանք հիմնված են մի նպատակով ուտելու, խմելու, Թուղթ խաղալու և պար գալու համար... Անդամների իրանց մէջ փոխադարձ լուսաւորելու, զարգանալու, կրթվելու, հասարակական Թէ ուսումնական հարցերին հետաքրքրվելու նպատակը՝ հեռու է մեր ժողովների դիտաւորութենից։

Թիֆլիսի գերմանացի արհեստաւորները իրանք են դիմում սորան կամ նորան, խնդրելով որ այս կամ այն առարկայի վրա դասախօսութիւններ կարդան,—այն ինչ մեր տեղական կլուբները, որք հասարակութեան դասակարգերի այնպիսի անդամներից են բաղկացած, որք իրանց զարգացմամբ արհեստաւորներից բարձր են համարում և շատ անգամ արհամարհանքով նայում են արհեստաւորների վրա, նոցա եթէ դիմում ես մի հրապարակական դասախօսութիւն անելու առաջարկութեամբ,—ամեն տեսակ դժուարութիւններ են անում առաջարկողին։ Իսկ եթէ վերջապէս, զանազան դժուարութիւններ անելուց յետոյ, եթէ Թոյլ էլ կը տան,—կը ստիպեն դասախօսին կամ դահլիճի վարձը վճարել, կամ եթէ բարեգործական նպատակով է դասախօսութիւնը, գուցէ դահլիճից վարձ չեն վերցնի, բայց կը վերցնեն լուսաւորութեան համար և կը ստիպեն դասախօսին իր հաշւով ամպիոնը և աԹոռները վարձել....

Այնպիսի հարցում, ինչպէս միօրական ժողովրդագրութեան հարցը որ ընդհանուր մի հարց է, իրան քաղաքի համար հետաքրքիր և օգտաւէտ մի խնդիր է, Թիֆլիսի գիմնազիեան միակ էր որ յօժարութեամբ տուեց իր դահլիճը անվարձ, իսկ մեր կլուբներից ոչ մինը ոչ ոքին չը դիմեց խնդրելով որ իր անդամների համար այդ հարցի մասին այս կամ լեզուով դասախօսութիւն կարդան...

Այն ինչ գերմանացի արհեստաւորների ժողովը, որոնց անդամներին մենք մեզանից երևի աւելի ստոր զարգացման աստիճանի ենք համարում,—ինքն դիմեց խնդրելով որ այդ հարցի մասին դասախօսութիւն կարդացվի և միօրական ժողովրդագրութիւնը քաղաքիս ընդհանութեան համար հետաքրքիր և օգտաւէտ հարց համարելով, վճռեց որ այն երեկոն մինչև անգամ օտարների համար ժողովի մուտքը ձրի լինի։

Եթէ մենք յոյս չունենք մեր հայրենակից արհեստաւորներից այդպիսի մի ժողով կազմել, նրանց դեռ ևս այնքան զարգացած չը համարելով, գոնէ աշխատենք մեր քաղաքի գործակատարների (приказчики) համար մի այդ տեսակ կլուբ, կամ ընկերութիւն հիմնել....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԻ ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

—

Երբ մարդ լսում է Թէ հայերը փոխեցին իւրեանց կրօնը, և կամ Թէ ուզում են փոխել, տակն ու վրայ է լինում, կռւում է ինքն իւր մտքի մէջ, ցաւում է տեսնելով կոյր-կոյր լինելը այն ժողովրդի, որին ամենից շատ միութիւն էր հարկաւոր, և երբ հանդարտում է նորա միտքը, կամայ ակամայ հարցնում է ինքն իրան Թէ արդեօք ի՞նչն է դոցա կրօնափոխութեան պատճառը։ Միթէ՞ հայն իւր կրօնի մէջ այլ ևս բարոյական և մտաւոր զարգացման ոյժ չէ գտնում. միթէ՞ հակասութիւններ է նշմարում իւր կրօնի մէջ, միթէ՞ կշռել և համեմատել է հայն իւր կրօնը նոր ընդունելի կրօնի հետ, և համոզուել է ունեցած և ունենալու կրօնի յատկանիշների վերաբերութեամբ. արդեօք ունէ՞ր նա այնպիսի մտաւոր զարգացումն որ կարողացաւ իմանալ երկուքին կրօնների մէջ եղած այն նուրբ սահմանը, որ միայն ամենաբարձր մտքերին է յայտնի. արդեօք նա, այսօրուան մտքով և ամեն հանգամանքներով և յատկութիւններով գիտութեան լուսից զրկուած հայը, այն տեղն է հասել միթէ որ այլ ևս կեանք չէ տեսնում իւր կրօնական ծիսակատարութեանց և արարողութեանց մէջ, միթէ նա բարձր է քան Թէ իւր պապերը, որք ընդունեցին և դաւանեցին հայկական եկեղեցւոյ հանգանակը, իսկ այսօրուան հայը, որ քաղցածութիւնից մտածելու ոչ կամք և ոչ կարողութիւն ունի, դա՞ պէտք է հերքէր լուսաւորչական կրօնի ուղղափառութիւնը. ո՛չ, ո՛չ դարձեալ ո՛չ։

Եթէ նա, այսինքն կրօնափոխ եղող հայ ժողովուրդը, ունենար այն բարձր մտաւոր զարգացումն որ կարողանար լուսաւորչական դաւանութեան վերայ բարձրից վար նայել, այն ժամանակ նա եղած դաւանութիւնների ամենին ևս վերից նայելով, ոչ մէկն էլ չէր ընդունելու, որովհետև բոլոր քրիստոնեայ եկեղեցիների ընդունած կրօնի հոգին և էութիւնը Հաւատոյ Հանգանակի մէջ է կայանում, որը՝ գրեթէ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներից նոյնութեամբ է ընդունուած, այսինքն մի և նոյն Հանգանակը կամ Հաւատամքն է՝ որ ասվում է առաքելական և ընդունուած է մի նուրբ զանազանութեամբ Թէ Արևելեան և Թէ Արևմտեան քրիստոնեայ եկեղեցիներից։ Ուրեմն փոխել կրօնը, նշանակում է փոխել արդէն ընդհանուր ժողովներով ընդունուած Հաւատամքը և ընդունել նոր Հաւատամք, որ լինի հակառակ ընդունուածի կամ մի քանի մասերով և կամ ամբողջապէս։ Մտէք այժմ կրօնափոխ եղող հայ ժողովրդի մէջ և հարցրէք նորան Թէ արդեօք. ո՞ր կէտերը, կամ ո՞ր մտքերն են քո պապերից ընդունուած Հաւատամքի մէջ, որ քեզ չեն դուր գալիս, որ հակառակ են քո գաղափարին, որ ընդդէմ են ուղղափառութեան, խղճի, մտքի, անհատական և ընկերական իրաւանց և բարօրութեանց, ո՞ր են այն կէտերը՝ որ դու կամենում ես փոխել։ Նա, եթէ անկեղծ է, անշուշտ կը պատասխանէ ձեզ որ իւր միտքը ամենևին այդ բաներին չէ հասնում և ինքն էլ այդ մտքերից, այսինքն այդ կրօնական մտքերից չէ ազդուած որ փոխում է կրօնը։

Մենք գոնէ համոզուած ենք որ հայ ժողովուրդը չէ հասկանում ո՛չ լուսաւորչական կրօնը, ո՛չ այս կրօնին վերաբերեալ ծէսերը և արարողութիւնները. նա եթէ այս բոլորը հասկանար, կը լինէր զարգացած ժողովուրդ և կը հասկանար որ հայկական եկեղեցին չէ արգիլում նորան լինել բարոյական և օգտաւէտ անդամ մարդկութեան. և այս է ամեն կրօնի պահանջը։

Իսկ որովհետև հայ ժողովուրդը չէ հասկանում ոչ լուսաւորչական կրօնը և ոչ լուսաւորչական եկեղեցւոյ արարողութիւնները, այս պատճառով 'ի հարկէ չէ կարելի ուրանալ որ նա ունի ներքին հոգեկան կեանք, ունի հոգեկան զգացմունք և այդ հոգեկան զգացմունքները պահանջում են հոգեկան սնունդ։ Ինքն իրանից այդ հոգեկան պահանջներին չը կարողանալով սնունդ և բաւականութիւն տալ, հարկաւորապէս պահանջում է այդ սնունդը իւր հոգևորականներից։ Նայելով Թէ նորա հոգևորականները քանի աստիճան զարգացումով բարձր են, ինչպիսի ուղղութիւն և սնունդ կարող էին տալ նորան, ինչպիսի յարաբերութեանց մէջ են իրանց հօտի հետ, և առհասարակ ինչպիսի բարք ու վարքի տէր են, այս ամենից կախուած է ժողովրդի զգացմունքի ուղղութիւնը, նորա սէրը դէպի իւր եկեղեցին և եկեղեցականը, նորա հաստատուն և ուղղափառ լինելը՝ իւր կրօնի մէջ. միով բանի նորա լուսաւորչական և ոչ-լուսաւորչական մնալը։

Կար ժամանակ, երբ հայն իւր կրօնին այնքան էր անձնուէր և հաստատ, որ սիրով զրկւում էր իր գոյքից և կալուածքից, իւր ամուսնից, զաւակից, ծնողներից և ազգ ու ազգականից, իւր սիրելի հայրենիքից և մինչև անգամ իւր Թանկագին կեանքից ու չէր ուրանում այն աւանդը, որի մէջ նա մկրտուելով, խորհրդապէս ուխտել էր միշտ հարազատ մնալ։ Բռնաւորի սուրը, ճարտասանի գրաւիչ լեզուն, մարդկային բնութիւնը յափշտակող աշխարհային բոլոր փայլքութիւնները, միով բանիւ, ամեն փառք և մեծութիւն առ ոչինչ էին քրիստոնեայ հայի կրօնասիրութեան հանդէպ։ Առաքինի նախահայր դաւանած և աւանդած կրօնը նուիրական էր նորա համար, սուրբ էր և 'ի վեր էր ամեն ինչից և ամեն մեծութիւնից. հայն աւելի շուտ իւր մարմնի գոյնը փոխելու կարելիութեան, քան Թէ իւր կրօնը փոխելուն կարող էր հաւատալ....

Բայց այդ այն ժամանակներումն էր՝ երբ հայկական եկեղեցւոյ սպասաւորները տոգորուած էին քրիստոնէական ճշմարիտ գաղափարներով, մարդավայել և Աստուածավայել գործերով էին զբաղուած, երբ իրանց վարք ու բարքով հաւասարիլ էին առաքելոց և նոյն իսկ իրանց վարդապետ և Տէր Քրիստոսին, որովհետև հոգևորական կոչման արժանանում էին միայն ուշիմ, նրբամիտ, խորագնին և աւետարանի հոգով և ճշմարտութեամբ բովանդակուած, ազգային և մարդկութեան բարիքների համար անձնուէր երիտասարդները։ Հայ ժողովուրդը տեսնելով իւր հոգևորականի ազնիւ վարք ու բարքը, զգալով նորա հոգոյ ազնուութիւնը, ճանաչելով նորա մտքի պայծառութիւնը, համոզուելով նորա անբիծ և անշահասէր գործունէութեան, ամենայն մտերմութեամբ յանձնվում էր նորան, սիրում և յարգում էր, որովհետև ինքն էլ սիրուած և յարգուած էր նորանից, հաւատարիմ էր այն ամեն խրատներին որ ասում էր նորան իւր սիրելի քահանայն, վարդապետը և այլն։ Հոգևորականին և աշխարհականին միմեանց հետ կապում էր նոցա փոխադարձ համակրութիւնը և անկեղծ սէրը։ Ժողովուրդը սիրելով իւր եկեղեցականին, սիրում էր և իւր եկեղեցին. սիրելով իւր կրօնաւորին, սիրում էր և նորա քարոզած կրօնը. եկեղեցականը ջանում էր իւր անձը կրօնի պաշտպանութեան, ժողովուրդն էլ օրինակ էր առնում իւր եկեղեցականից։

Այո, չենք ուրանում որ բարի և առաքինի հոգևորական խմբի մէջ այն ժամանակներումն էլ էին գտնվում չար և մոլի հոգևորականներ։ Բայց եթէ այն ժամանակներում վատերն էին բացառութիւն կազմողը, ցաւօք սրտի պէտք է խոստովանել որ այժմ լաւերն են բացառութիւն կազմողը։ Այժմ այն դրութեան ենք հասել որ ակամայ մոռացութեան ենք տալիս լաւ հոգևորականի իսկական յատկութիւնները, և գոհ ենք լինում մի որ և է հոգևորականից՝ եթէ նա գոնէ ուղղակի և դիտմամբ վնաս չէ տալիս մեր ժողովրդին։ Այս նշանակում է որ մենք նորանից բարի գործեր չենք սպասում և բաւական է որ նա լինի պարկեշտ և իւր տգիտութեամբ չը յանդգնի իշխել ժողովրդի իրաւանց վերայ։ Խեղճ ժողովուրդը, հանգամանքների բերմամբ, յանձնել է իւր բոլոր իրաւունքները, այն մարդկանց ձեռքը, որք իրանց իրաւունք են համարում ստանալ ժողովրդից փառք, պատիւ և հարստութիւն, ապրել ժողովրդի քրտնաթոր վաստակով և սակայն պարտք չեն համարում ճանաչել իրանց սրբազան պարտաւորութիւնները դէպի ժողովուրդը: Այս է ահա, որ ժողովրդին ստիպում է հեռանալ այդ մարդկանցից և դոցա անընդունակութեան զոհ է բերում իւր ամենասրբազան սեփականութիւնը—իւր կրօնը:

Զարմանալի՜ բան. կարծես մեր հոգևորականներից շատերը չեն հասկանում դեռ ևս որ ժողովրդի հետ սիրով վարուելը, նորա կարիքներին կարեկից լինելը, նորա իրաւանց պաշտպանելը, նորա ծնշեալ և տառապեալ կեանքը աւետարանի հոգով մխիթարելը, նորա մտքի խաւարը գիտութեան լուսով հալածելը, նորան իւր լեզուի, պատմութեան և կրօնի մէջ ծանօթացնելը և այլն և այլն. ուղղակի իրանց օգուտն է և պարտաւորութիւնը. և այսպիսով միայն կարող են գրաւել ժողովրդի սէրը և համակրութիւնը:

Քանի-քանի մսավաճառներ, գինեվաճառներ, խոհարարներ, տաւարածներ, խոզարածներ, հարուստների և վարդապետների փոքրաւորներ, արքունի ծառայութիւնից խայտառակութեամբ աքսորեալներ, կենաց պահանջներին ըստ ամենայնի անընդունակներ, արժանացել են հոգևորական այլ և այլ աստիճաններին:

Դոքա կարդում են մեր գրաբառ լեզուն մեքենաբար միայն, առանց հասկանալու, դոքա չեն կարող կատարել Քրիստոսի պատուէրը թէ. „ուսուցէք նոցա (ժողովրդին) զամէն զոր պատուիրեցի ձեզ" որովհետև այդ „պատուիրանները" գտնվում են իրանց անհասկանալի գրքերի մէջ: Այս է ահա, որ ստիպում է ժողովրդին հեռու փախչել այդպիսիներից:

Սխալուած կը լինենք եթէ հաւատանք թէ հայ ժողովուրդը իւր պապերի սրբազան եկեղեցուց կամ կրօնից է հեռանում, եթէ թէ լուսաւորչական դաւանութեան մէջ արատ կամ բիծ նշմարած լինէր. քա՛վ լիցի. այլ նա դեռ ևս լուսաւորչական դաւանութեան առաջին աստիճանն է կոխել, տակաւին շատ աստիճաններ կան իւր առաջև դէպի վեր բարձրանալու, մինչև որ կարողանայ նշմարել հայկազեան եկեղեցւոյ ազատ և անբիծ ոգին, որ ոչ միայն մեր հասարակ ժողովրդին՝ այլ և մեր հոգևորականներից խիստ շատերին ևս անտեսանելի և անյայտ է: Այդ ազատ ոգւոյ ճառագայթները պէտք է թափանցեն ժողովրդի մտքի և սրտի մէջ, որպէս զի և տաքացնեն նորա սիրտը դէպի հայկազեան եկեղեցին, և լուսաւորեն նորա միտքը, որպէս զի ճանաչէ իւր իրաւունքները, և ամեն մի բողոքականի միսիոնարի դատարկ լոյսերից չը յափշտակուի:

Ուրեմն չը մեղադրենք միայն ժողովրդին որ նա հաւատարիմ չէ մնում իւր կրօնին, այլ քննութեան է կարօտ նորա կրօնափոխութիւնը. նախ պէտք է այդ քննել, իմանալ նորա կրօնափոխութեան բուն պատճառները, և ամեն ջանք ի գործ դնել առնելու առաջն այդ կրօնափոխութեան, որով կտոր-կտոր է լինում ժողովրդի ույժը և որով ատելութիւն է ծագում մի և նոյն մօր զաւակների մէջ:

Կրօնափոխութեան ամենից գլխաւոր պատճառները, մեր կարծիքով հետևեալներն են.— 1. Հոգևորականաց և ժողովրդի կատարեալ տգիտութիւնը կրօնի և ազգային գրականութեան մէջ. 2. Ժողովրդի և հոգևորականների փոխադարձ հակակրութիւնը, որ յառաջացել է հոգևորականների անվայել վարք ու բարքից և անկարգ հարստահարութիւնից. 3. Ժողովրդի ձայնը և աղաղակը միշտ խեղդելը և հզօրի կամքը կատարելը. 4. Ժողովրդի աղքատութիւնը որից օգուտ են քաղում միսիոնարները. 5. Հոգևորականների կատարեալ անհոգութիւնը և անընդունակութիւնը գիւղերում տարրական դպրոցներ բանալու և կառավարելու նկատմամբ. 6. Հոգևոր տուրքերի ժողովելու ժամանակ արած անխղճմտութիւնը. և որ մեծն է 7. Տգէտ և ըստ ամենայնի անարժան հոգևորականաց թիւը օրէց օր աւելացնելը. և այլն և այլն:

Սէկունի

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

10 Նոյեմբերի. 1875

Այս տարի Նիժնայի տօնավաճառումը Մալիւտինի տանը տորոնի գին տուաւ 3 մ. 50 կ., շուտով ընկաւ 3 մ. 25 կ-ի, մինչև 3 մ.. Շատերը ծախեցին ստիպուած 3 մ. 25 կ-ով, մին քանիսները ֆաբրիկանտներին տուին ժամանակով փութին 4 մ. հաշուելով, մին քանիսները գրեթէ մի և նոյն հաշւով ապրանքի հետ փոխեցին.—Ում որ տորոնի մշակութիւնը գոնեա քիչ մի յայտնի է, այս գները առանց բացատրութեան նորան ցոյց են տալիս—տորոնը մեռել է, առնողը ձրի է վեր առնում.—Մալիւտինի տունը առնում է տորոնը, եթէ թէ ողորմութիւն է բաժանում. Եւ ո՞վ է այդ ողորմութիւն տուողը. նա, որ տորոնից միլիօններով շահուել է, նա, որ տորոն ցանողներին միշտ մեծ յոյսեր է տուել և քաջալերել, նա, որ տորոնի առուտուրում մօնօպօլ էր կազմել և ամենին պատժում էր, ով որ համարձակվում էր տորոնին մօտենալ.

Տորոնի տոնակոխ լինելուն, ինչ են պատճառ բերում. տորոնչիներու աչքը նիւշում են, ոչ թէ մին սև սատանայ, այլ մին կարմիր—ալիզարինը, և վարւում են նոցա հետ, ինչպէս կամենում են.

Ալիզարին կամ Ալիզարի կոչւում է այն ներկը, որը պարունակվում է տորոնի արմատի մէջ. Այս դարուս սկզբներումը աշխատում էին քիմիկոսները դորա ճիշդ քիմիական միութիւնը գտնել, որ և վերջը յաջողուել է. Վերջը շատերը աշխատեցին մի և նոյն ներկը արհեստական, որ է քիմիական ճանապարհով առաջ բերելու. Երկար փորձերից վերջը երեք գերմանացիներ (Գրեբէ, Լիբերման և Կարօ) կարողացան հանքային ածուխի մնացորդ թանձրութիւնից քիմիապէս ալիզարինը կազմելու, որ և կոչւում է՝ արհեստական ալիզարին. Դոքա ստացան 1869 թւին Անգլիայից պատէնտ. Թէպէտ և կան արհեստական ալիզարինը կազմելու զանազան եղանակներ, բայց վերոյիշեալ պարոններից գտած եղանակը գործարաններում աւելի ընդունված է.

Գերմանիան իրան հարկաւոր տորոնը ստանում էր Ֆրանսիայէն և Հօլանդիայէն, իսկ մին քանի տարուայ կարճ ժամանակամիջոցում այդ անյայտ ներկը առուտուրում այնչափ առաջ գնաց, որ տորոնի վերաբերեալ գործարանները Ֆրանսիա ալիզարինի են յարմարցնում և ամեն տեղ տորոնի մշակութեան սպառնում է իսպառ կորուստ.

Արդէն 1874 թւին Գերմանիայում 10 ալիզարինի գործարաններ կային. Զարմանք չէ, որ ալիզարինը առաջ է գնում. Քիմիան աշխատում է նորան կատարելագործելու. իսկ սորան նպաստում է մէկ ամբողջ շարք փորձուած հարուստների, որոնք հինգ տօկօսով ևս բաւականանում են. Մեծ քանակութեամբ ալիզարին է բերվում Գերմանիայից Ռուսաստան և օր ըստ օրէ գները պակասում են. Ալիզարինի էժան ծախուելու գլխաւորութիւնը աչկարայ է. Տորոնը կոչնչանայ, Ռուսաց ֆաբրիկները ևս ալիզարին գործածելու կը փոխուեն—իսկ վերջը ալիզարինը առուտուրում առանց մրցողութեան միայնակ մնալով միանգամում իւր կրած վնասները կը ծածկէ և անչափ կը շահուի.

Ի նկատի ունեցած ալիզարինի մրցողութիւնը, արդեօք արդի բացուած տորոնի գինը (3 մ. 25 կ.) բնական է. Ոչ. ես համոզուած եմ, որ այդ գինը արհեստական է, որը գոյացել է տորոն առնողի (Մալիւտին) և տորոն ծախողների մէջ եղած եղական յարաբերութիւնից.

Մի որ և իցէ ապրանքի, բերքի գինը կարող է առուտուրում բարձրանալ և իջնել,—այո, եթէ այդ իսկ ապրանքը առուտուրում անպէտք է կարող է նոյն իսկ գնից զրկուել, եթէ նորան արդիւնաբերելու վերա շատ ծախս ևս արուած լինի. Պարզ բան է, ինչ որ անպէտք է, անգործադրելի է, կարող չէ գին, արժողութիւն ստանալ. Եթէ տորոնը հիմա անպէտք է, այն տորոնը, որ մին քանի տարի առաջ 10 մանեթով էր ծախվում փութը, բնականապէս չը պէտք է գին ունենայ, չը նայած այն զանազան ծախսերին և աշխատանքներին, որոնք մսխուած են տորոնը արդիւնաբերելու վերա. Բայց եթէ տորոնը դեռ հարկաւոր է (այս տարի մօտ 300,000 փութ տօրոն կար և ամենամեծ մասը ծախուել է. ուրեմն դեռ գործ է ածվում), պէտք է իւր արժանաւորութեան համեմատ գին ունենար. Իսկ իւր արժանաւորութեան համեմատ գինը համարում եմ ես այն ամեն և հարկաւոր ծախսերի գումարը, որը տորոնը ցանելուց սկսած մինչև նորա քանդելը և տօնավաճառ հասցնելը մսխվում է. Թէ այս գումարը չէ համապատասխանում այժմեան 3 մ. 25 կ. գնին, այդ ամենից լաւ յայտնի է առնողին, որ մինչև վերջերս կարողացել է պարզամիտ շատ տորոնչիներու մօտ իրան իբրև մեր երկրի բարերար ներկայացնելու, այն ինչ ինքն է երկրի անկման գլխաւոր պատճառներից մէկը.

Ես ասացի, որ տորոնը իւր այժմեան արհեստական գինը ստացել է տորոնչիներու և առնողի մէջ իշխող տարօրինակ յարաբերութիւնից, ես պիտի աւելացնեմ. ալիզարինը չէ երկրի անկման բուն պատճառը, որին հանդիպել է դժբաղդաբար մեր Կովկասի մին քանի գաւառները. Այլ կարող եմ պնդել, որ ալիզարինը արագացրել է դէպի կործանումն յլցուած գաւառների տնտեսականութեան չէնքը, որի խախուտ հիմքերը սկզբից նուիրուած էին կործանման.

Երբ ես 1873 թւին աշնան առաջին անգամ գնացի ինձ անծանօթ երկիր, Դէրբէնդ, և ստիպուած ընդունեցի ինձ վերա մեր տորոնացանքների և միւս գործքերի կառավարութիւնը, այն ժամանակներում երկրի առևտրական, տնտեսական հանգամանքների հետ փոքր ի շատէ ծանօթանալով՝ «Մշակին» մի նամակով իմ կարծիքս այդ մասին գրել էի.

—«Դէրբէնդի և Ղուբի (գաւառները) բնակիչները տորոնով են զբաղուած, սոքա կանգնած են տորոնով և կընկնեն տորոնի հետ. Մալիւտինը հիմնել է մենավաճառութիւնը. երկրի տնտեսութիւնը, առևտուրը վայրենի—վանդալական է. մի օրումը ուզում են հեշտութեամբ հարստանալ, որով և բնութեան ուժերը ապականում են. Ներկայ սերունդը ոչինչ չէ պատրաստում ապագայի համար և ապագան ներկայ սերունդով ապահովուած չէ».—կարծեմ այս էր իմ նամակիս բովանդակութիւնը.

Մօտ երկու տարի նոյն երկրումը բնակուելով՝ անընդհատ երկրի հանգամանքների հետ ամենամօտիկ յարաբերութեանց մէջ լինելով, ուսումնասիրում էի նորա տխուր առևտուրի և տնտեսութեան եղանակը, ցաւով տեսնում եմ հետևանքներումը իմ ասածներիս և տեսածներիս ճշմարտութիւնը.

Ընդհանուր առևտուրի պատմութեան մէջ կարելի է միշտ օրինակներ գտնել, որ մարդկային ցեղը իւր օրական պահանջները լցուցանելու համար միշտ նոր բաներ է արդիւնաբերում, և թէ մի որ և իցէ ընդունուած և գործածուած արդիւնք կորցնում է իւր արժանաւորութիւնը, այլ ևս չէ գործածվում. մի խօսքով մօդայից ընկնում է, պատճառ, առուտուրում մտել է մի ուրիշ արդիւնք, որը առաջինից աւելի լաւ է, օգտաւէտ է և ձեռնտու, գուցէ և ժամանակի ճաշակին աւելի համապատասխանում է.

Ներկայումս քիմիան, արհեստները մեծ առաջադիմութիւն են արել, տարակոյս չը կայ, որ մօտիկ ապագայն այսպիսի փոփոխութեանց առաւել ենթարկուած է, տորոնչիները պէտք է մտածէին, որ տորոնը կարող չէ միշտ բարձր գնում մնալ. և թէ կարող է պատահել մի այսպիսի կրիզիս.

Եթէ մեր երկրի մարդը քիչ մի հասկացողութիւն ունենար հաշւից, առևտուրից, տնտեսութիւնից, թէ նա իւր կարողութեան չափ գործք սկսէր և ծախսեր անէր և համոզուէր, որ իւր դրացիներու տունը քանդել աշխատելով, իրանը ևս կը քանդուի, չի հարստանար, այն ժամանակը մեր երկիրը քիչ վնասով կարող էր ազատուել ներկայ կրիզիսից, և ոչ թէ այսպէս խեղճ երկիրը անպատրաստ և անտպաս հանդիպում է իւր ուժեղ ոսոխին—ալիզարինին, և մի և նոյն ժամանակը ստիպուած, անպայման հպատակում է իւր բարերարին (sic!) Մալիւտինին.

Չեմ կարող նպատակ ունենալ մի նամակի մէջ տորոնի մշակութեան և նոյն երկրի տնտեսութեան պատմութիւնը նոյն իսկ ամենակարճ կերպով նկարագրելու, բայց մի քանի խօսք պիտի այդ մասին ասեմ, որով և ընթերցողին հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ առանց ալիզարինի ևս Դէրբէնդու և Ղուբի գաւառները շուտ թէ ուշ ներկայ դժբաղդութեան պիտի հասնէին.

Սորանից կարծեմ տասն և ութ տարի առաջ յանկարծ տորոնի գինը Դէրբէնտում Մալիւտինը բարձրացնում է 11 մ. փութին չը լսուած, չը սպասած գին.

Ամենքը կորցնում են իւրեանց գլուխները, ամենքը ստանում են մէկ տեսակ ջերմ, որը կարելի է անուանել տորոնի ջերմ. Ամեն կողմից հաւաքվում են Դէրբէնդ, Ղուբայ տորոն ցանելու, անպայման, անսահման, ինչ որ ունեն թէ դրամագլուխ, թէ աշխատանք միասին հողի տակն են դնում, այդ բաւական չէ տօկօսով փող են վեր առնում, այն ևս գետնի տակը ցանում. Ամենքը ուզում են ինչպէս և լինի շուտ, հեշտ և առանց նեղութեան մեծ հարստութիւնների տէր դառնալ. Այդ կրքին զոհւում են գեղեցիկ անտառներ, հողերի ահագին տարածութիւններ... շուտով անցւորը տեսնում է ամեն տեղ, մինչև անգամ լեռների գագաթների վերա միայն տորոնի ցանքսեր, որոնք երկայն և այլանդակ գերեզմանների նման անցւորի աչքին են ընկնում. Բայց անցւորի համար աւելի ցաւալի կը լինի այդ տեսարանը, երբ նա գիտէ երկրի երկրագործութեան տխուր դրութիւնը. շատ տարածութիւններ բռնուած են տորոնով, որոնց մէջը իսկապէս ոչինչ չը կայ. Բնականապէս և չեն պակասում երկրի հիւանդ տնտեսական դրութեան արտայայտութիւնները—վաշխառուները, հարստահարողները.

Սոքա բաշխում են և առատ փողեր բաժանելով՝ միամիտ տորոնչուն քաջալերում են տորոն ցանելումը. Իսկ ամենքը միասին իւրեանց յոյսը դնում են Մալիւտինի տան վերա. Այս անչափ հարուստ տունը տորոնի գինը բարձրացնելով՝ միշտ նաղդ փող տալով, մէկ կողմից հեռացնում է առնողներին ուրիշներից, որ իրան առնելումը ոչինչ արգելք չը դնեն, միւս կողմից սովորելով մեր երկրի մարդկանց բնաւորութիւնը և թոյլ կողմերը, տիրապետում է սոցա և այսպէս կազմում է տորոնի առևտուրի մէջ մօնօպօլը. ամբողջ երկու գաւառի լինելու և չը լինելու հարցի ապահովութիւնը յանձնվում է մէկ տան, այն մէկ մարդու.—Որովհետև միւս ամեն գործքերը տորոնին են մտիկ տալիս, բնականապէս տափի, տների, կենսական հարկաւոր պիտոյքների գները բարձրանում են, շատ հարկաւոր բաներ, ինչպէս ալիւրը, երկրումը պակսելով, բերում են ուրիշ տեղից.

Թէպէտ և տարին երկու միլլիօնից աւելի փող է մտնում նոյն երկու գաւառներում, բայց շուտով nervus rerum, փողը անհետացել է, ամենաբարձր տոկոսներ են առաջարկւում գոնեա քիչ մի փող ձեռք բերելու. Մանուֆակտուրի ապրանքը, կտաւեղէնը արժէքի գնից պակաս է ծախւում, որովհետև փողը բերում է մէկ ամսում մի ամբողջ տարուայ տօկօսը (տորոն քանդելու ժամանակը շատ անգամ 100-ը 10%-ից աւելի է բերում մէկ ամսում).—Երկրի մի այսպիսի տխուր դրութիւնը, ուր ընդհանրապէս տորոնչուն ոչ երկիրն է պատկանում և ոչ դրամագլուխը, այսպիսի մի անհիմն առևտուր և տնտեսութիւն, ուր անչափ և անհաշիւ փողերը և երկրի ուժերը վատնվում են, մի հասկացող մարդուն ծանր հոգացողութեանց մէջ պիտի ընկղմէր ապագայի համար, բայց ուրիշ տեսակ է կազմուած մեր տորոնչին. Նա անհոգս է և ուրախ նայում է ապագայի վերա. Այս ամեն ծախսերը տորոնը պիտի ծածկէ, տորոնը վերջ ի վերջոյ նաղդ է, ասում է նա, և հինգ տարուայ համար նա առաջուց սպեկուլացիա է անում, այն անձը որ իւր մի օրուայ հաշիւը չը գիտէ և կարող չէ հասկանալ. Ապրելու, պսակվելու, իւր կնոջ համար զիզի-միզի առնելու փող է հարկաւոր, տորոնչին պարտք է անում. տորոնը ջրելու, հողելու, քանդելու և ճանապարհելու ամեն անգամ փող է հարկաւոր, տորոնչին շարունակ պարտք է անում բարձր տօկօսներով. Այս ծախսերի գումարը հինգ տարում տորոնի վերա բաժանելով, փութին ընկնում է 7—8 մ. և աւելի. Ինչ փոյթ.... տորոնը նաղդ է, նա կը ծախէ 11—12 մանէթով, ունի [illegible] մին քանի մանէթ աշխատանք—վերջը. Բայց վերջը հիմայ է, և հիմայ տորոնը չէ ծախւում, ոչ նաղդ, ոչ նիսիա, Մալիւտինը ձրի է ուզում.

Մեր երկրի բնակիչները տգիտութենից իւրեանց իրենց դժբաղդութեան պատճառ են դառնում, կամենալով հեշտ և շուտ հարստանալ, գործադրում են տնտեսութեան այնպիսի մի եղանակը, որոյ օրինակը վայրենիներու մօտ կարելի է գտնել ուր երիտասարդ ու պտղաբեր ծառի քաղցր պտուղները դիւրութեամբ վայելելու համար, վայրենին կանգուն ծառը արմատից կտրում է.

Գուցէ այս փորձերից մեր երկրացիք խրատուեն, այդ մասին ապագայի ամեն պատասխանատուութիւնները պատկանում են նորանց ապագային. Տորոնը ուտել, խմել, հագնել... կարելի չէ, բայց ինչ անեմ, որ ամբողջ երկու գաւառի աշխատանքը պարունակվում է տորոնում, որը գրեթէ միակ գետնի տակը տարածուել է. Հազարաւոր լեռնականներ, որոնք առաջ տորոնի մշակութեան մէջ պարապմունք և ապրուստ էին գտնում, հիմա երկուսից ևս զրկուած են. ծանօթ բան է, պարապութիւնը և քաղցած փորը սովորաբար վատ հետևանքներ ունեն. Հիմնական հարցը այսպէս պէտք է դնել, ինչ տեսակ միջոցներ են հարկաւոր գործադրել, եթէ տորոն մշակել այլ ևս ձեռնտու չէ, ներկայումս գետնի տակը եղած տորոնի համար այսպիսի մի ելք գտնելու, որով տորոնչիները համեմատաբար աւելի թեթև վնասով կարողանան ներկայ կրիզիսից [illegible] աւելի ձեռնտու և օգտաւէտ մշակութեան [illegible]. Այս հարցը, որը սպասում է վճռին, Միւս նամակիս մէջ իմ առաջարկութիւնս կանեմ այս մասին.

Դոկտոր Սպանդարեան

ՆԱՄԱԿ ՄՕԶԴՕԿԻՑ

—

Մօզդօկու Հայ-Օրիորդական ծխական ուսումնարանը ունի առայժմ 40 աշակերտուհիք։

Ուրախութեամբ լսում ենք, որ մօզդօկեցի յարգելի տիկիններից ոմանք ցանկութիւն են յայտնել արժանաւոր ընծայաբերութիւնք անել իւրեանց նորաբաց ուսումնարանի կարօտութիւնքը հոգալու համար։ Մեզ շատ քաղցր է լսել և տեսնել, որ իգական սեռը Մօզդօկում կամենում է մասնակցել կրթութեան գործին, և այսպիսով մի քայլով մօտենում է դէպի իւր նուիրական կոչումը—մայր գոլով՝ մայրեր պատրաստելու սուրբ գործին օժանդակ լինել։ Այո, առանց ձեր մասնակցութեան, յարգելի տիկիններ, առանց ձեր օժանդակութեան, մեր գործը կիսով չափ միայն առաջ տարած կարող էինք համարել. դուք պէտք է լինիք միջնորդը ուսումնարանի և ընտանիքի մէջ։ Երբ ուսումնարանը իւր պարտականութիւնները, վերաբերեալ դէպի աշակերտուհիքը, կը կատարի, իսկ դուք որպէս մայրեր կամ մերձաւորներ, կաշխատէք նորանից ձգած սերմերը բեղմնաւորել ընտանիքի մէջ, այն ժամանակ միայն ուսումնարանը կարող է յուսալ արդիւնաւոր արգասիքներ տալու։ Երանի թէ դուք իմանալ կարողանայիք, թէ որպիսի էին ձեր նախորդները ձեզանից տասնաւոր դարեր առաջ, որպիսի հոգով և ազգասիրութեամբ ոգևորուած նախանձախնդիր էին ընտանեկան և հասարակական բարեկեցութեան, և որչափ անձնուրաց դէպի ազգային շահերը։ Ապացուցէք, հայ տիկիններ, որ դուք նոցա շառաւիղն էք, նպաստեցէք լուսաւորութեան տարածելուն գոնէ ըստ ձեր կարեաց (մենք անձնազոհութիւն չենք պահանջում) և հնար մի տուէք մեզ ասելու, որ մեր հասարակական ոյժի ամբողջ կէսը միանգամայն անտարբեր է դէպի լուսաւորութեան գործը։

Բայց, տարօրինակ երևոյթ. չը նայելով, որ Մօզդօկաբնակ տիկիններից շատերը այսպէս աչկարայ համակրում են իւրեանց սեռի զարգացման գործին, չը նայելով՝ որ նոցանից ոմանք արդէն գործնականապէս ապացուցել են իրանց համակրութիւնը, որպէս տիկին Աւանեանը՝ առաջարկելով իւր տունը երեք տարի ժամանակով, չը նայելով, որ ոմանք հագցնում են չքաւոր օրիորդներին, իսկ ուրիշները խոստացել են նիւթական նպաստներ—Մօզդօկի տրական դասի մէջ յայտնվում են անձինք, որոնք անբարեացակամ աչքով են նայում այս ուսումնարանի բացմանը։ Մենք չէինք ցաւել և առանց ուշադրութեան կը թողնէինք այս երևոյթը, եթէ չը նկատէինք նոցա մէջ այնպիսի անձինք, որոնցից միանգամայն սպասելի չէր այսպիսի հայեացք այս գործի վերաբերութեամբ։ Այսպիսի անձինքներին մենք չենք սկսել բացատրել իգական սեռի կրթութեան կարևորութիւնը, որովհետև դոքա այդ բանը չեն մերժում. կասենք միայն, որ նոցա հայեացքը շատ սխալ է սկզբնական ուսման դաստիարակութեան եղանակի վերաբերութեամբ։ Ամենայն լուսաւորեալ ազգերումը ընդունուած է սկզբնական ուսանելիքները նորեկ մանուկներին աւանդել մայրենի լեզուով, այն լեզուով որով նոքա թոթովում են, որով իրանց սահմանափակ հասկացողութիւնները յաջորդում են միմեանց։ Լուսաւորեալ ազգերը այս բանը անում են ոչ միայն իրանց ազգային լեզուն պահպանելու մտքով, այլ համոզուած լինելով, որ սա է միակ ուղիղ և հոգեբանօրէն ճիշդ միջոցը մանուկներին կրթութիւն տալու, որ մայրենի լեզուի հնչիւնները, ոճերը, դարձուածները հասկանալու համար մանկան հոգեկան ունակութիւնքը ի ծնէ իսկ կազմակերպուած են։ Այս ընդհանուր հոգեբանօրէն ճիշդ կանոնից շեղուելով, դաստիարակութիւնը յաջողակ հետևանքի չէ հասնում... Մանուկները կարդում են մի, երկու, երեք տարի և սորա արտադրութիւնը լինում է մի մեծ ոչինչ... Բայց այդ երեք տարում պէտք է զարգանային նոքա մտաւորապէս, այդ ժամանակամիջոցում պէտք է ամբարէին իրանց ապագայի համար թէև փոքրիկ, բայց ընտիր և պիտանի պաշար,—որ կարողանային տրամաբանօրէն և գիտակից կերպով իւրեանց միտքը ուրիշին հաղորդել։ Նոքա այլ ես ժամանակ չունեն ուսանելու, և թէ ունեն ես, ուսումնարանը չէ տալիս նորանց այդ ասպարէզը։ Կորուստը մեծ է, բայց միամիտ հայրը, մի քանի օտար բառեր լսելով իւր զաւակի բերանից, կարծում է, թէ փիլիսոփայ է դարձել։ Նա անկարող է չափել իւր զաւակի հասկացողութեան աստիճանը, ուստի և յափշտակուած արհամարհում է բոլոր այլ միջոցները կրթութիւն ստանալու, միակ օգտակարը համարելով իրան անհասկանալին և շլացնողը։

Երկուսից մինը. կամ այսպիսի կարծիք յայտնող պարոնները իսկապէս չեն հասկանում իւրեանց ծնողական պարտականութիւնքը դէպի իրանց զաւակների կրթութիւնը, կամ եթէ հասկանում են, ապա այնպիսիներից են, որք զաւակների օգուտը և նոցա ապագան զոհում են իրանց անձնական նպատակներին։ Գոնէ այնքան ազնուութիւն ունենային այդ պարոնները, որ ուրիշների կարծիքի վրա չը բռնանային։

Ն. Տէր-Ղևոնդեան

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԷՆԴԻՑ

—

Նոյեմբ. 14

Դերբէնդը որ իւր ներկայ նիւթական ձախորդ հանգամանքներով ամենաստորին տեղը պիտի բռնէր կովկասեան քաղաքների մէջ, թէև ոչ արագ, բայց յառաջ է գնում. ամենքին ծանօթ տորոնը որ փոքր առաջ իւր տուած առատ օգուտներով ամենագլխաւոր դերն էր կատարում Դերբէնդու վաճառականութեան մէջ, այժմ համարեա դէն գցած է Դերբէնդցիների մի մասը (մեծ մասը ոչ) իրենց ձեռքին ունեցած փողերը էլ չեն փչացնում տորոնի մշակութեան վրա, նոքա էլ առաջվայ պէս չեն երևակայում որ ժամանակով տորոնից ստանալու են այն քաղցր ու գառն պտուղները որ մի ժամանակ վայելում էին. նոքա նրան փչացած են համարում. նրանից ով որ փոքր ի շատէ ունի դրամագլուխ, պարապվում է վաճառականութեամբ. այգի ունեցողը այգեգործութեամբ. միջին ու ստորին դասը դիմում է արհեստների (ճիշ. մեզ մօտ չը կան արհեստներ) իսկ գիւղացին երկրագործութեան և ահա այս տեսակ երևոյթները Դերբէնդու այդ աննշան մասին կարծես ապագայում լաւ յոյսեր են խոստանում, բայց ցանկալի էր իմանալ. ինչ է սպասում Դերբէնդու այն մեծ մասը որ շարունակում է իւր ասածի լինել. միթէ բաւական չէին այն ամեն հարվածները որ նա ստացաւ երեք տարի շարունակ. եթէ նա էլի տգիտութեամբ շարունակէ տորոնագործութիւնը. կը սխալուէ չարաչար. լաւ կը լինէր որ նա թողէր իւր յամառութիւնը և հետևէր իւր փոքր մասի գովելի օրինակին. իսկ աւելի լաւն՝ այն կը լինէր որ նա լսելով մեր լրագրութեան խորհուրդներին վաղօրօք թողէր տորոնագործութիւնը. որով նրա նիւթական բաժինը փոքր ի շատէ ապահովված կը լինէր այժմ։

Վերջացնելով սրանով մեր նամակը, զուբացիների ուշադրութիւնը հրաւիրում ենք դերբէնդցիների նոր ձեռնարկութեանց վրա։

Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

„Тифл. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է որ նոյեմբերի 30-ին պիտի լինէր Թիֆլիսի զինւորական ժողովի (կլուբի) բացումը։

⁂

Նոյն լրագիրը հաղորդում է որ Թիֆլիսի Գերմանական կլուբում նոյեմբերի 22-ին կար մի դիմակաւոր պարահանդէս յօգուտ Հիրցեգովինայի վիրաւորվածների։ Հաւաքվեցաւ 104 րուբլ այդ նպատակով։

⁂

Մեր ընթերցողներին յայտնի է իշխան Վախվախօվի անցքը. որ անցեալ տարւայ դեկտեմբեր ամսին զայրացած դրութեան մէջ դատաստանի ներկայութեամբ խանչալով վիրաւորեց իւր քրոջ ամուսնուն իշխան Ջելօկաեվին, երբ սորա գործը քննվում էր Թիֆլիսի նահանգական դատարանի մէջ։ Այժմ, նոյեմբերի 22-ին Թիֆլիսի նահանգական դատարանը, քննելով Վախվախօվի գործը, դատապարտեց նորան Սիբիրի մէջ աքսորվելուն չորս տարի ժամանակով, զրկելով նրան բոլոր իրաւունքներից, բայց աչքի առաջն ունելով մի քանի մեղմացնող հանգամանքներ, վճռեց դիմել Նորին Կայսերական Մեծութեանը ամենախոնարհաբար խնդրելով որ այդ պատիժը փոխանակվի մի տարի և չորս ամիս բանտարկութեամբ։

⁂

Քութայիսի Միքայէլեան կալուածական բանկի կանոնադրութիւնը հաստատվեցաւ կառավարութեան կողմից։

⁂

Կովկասեան սարերի գլխաւոր շղթայի վրա, ինչպէս հաղորդում է „Тифл. Вѣстн.“ լրագիրը, Գուդաուրի և Բայդարա փոստային իջևանների մէջ տեղ յարակցութիւնը խափանված է եկած մեծ ձիւների պատճառով։

⁂

Քանի մի օր շարունակ Ռուսաստանի փոստը չէր գալիս։

⁂

Մենք առիթ ունեցանք այս օրերումս այցելութիւն գործել մի երիտասարդ գերմանացի նկարիչ, պ. Հեւվիգի գործանոցը։ Երիտասարդ նկարիչը զբաղված է այժմ մի նոր ակվարէլի պատկեր նըկարելով, որ ներկայացնում է Թիֆլիսի հին թատրոնի հրդեհը։ Պատկերը քառակուսի արշինի չափն ունի։ Այդ պատկերը երևի կը ներկայացվի շուտով մեր գեղարվեստական ընկերութեան մէջ։ Երիտասարդ նկարիչը ունի նուրբ զգացմունք և գովելի է որ չէ սիրում էֆէկտներ և աչքի ընկնող գոյներ, այլ աշխատել է որքան կարելի է համեստ լինել և հաւատարիմ մնալ բնութեան և ճշմարտութեան։ Այդ լաւ յատկութիւն է։

⁂

Նոյեմբերի 29-ին Թիֆլիսի գերմանացի արվեստաւորների ժողովում դ. Գրիգոր Արծրունի կարդաց մի դասախօսութիւն գերմաներէն լեզուով միօրական ժողովրդագրութեան վրա։ Դասախօսութիւնը, համեմատելով հայերէն լեզուով կարդացածի հետ, փոքր ինչ կարճացրած էր և դուրս էին գցած օրինակներից նոքա որք վերաբերում էին միայն հայոց կեանքին, և մտցրած էին մի քանի նոր օրինակներ, որք վերաբերում էին յատկապէս արվեստաւորների դասի կեանքին և տնտեսական օգուտներին։

⁂

Վրաց թատրոնասէրները ներկայացրին վրացերէն լեզուով նոյեմբերի 27-ին պ. Գ. Սունդուկեանցի «Պէպօ» կոմեդիան։ Վրաց հասարակութիւնը, որ լցնում էր թատրոնը, հիացած մնաց։ Հեղինակին դուրս կանչեցին քանի մի անգամ։ Խաղացողներից ամենից լաւ կատարեցին իրանց դերերը օրիորդ Կիպիանի (պառաւ Շուշանի դերում) և պ. Ջմշկեան (Պէպօի դերում), որ միակ հայ էր, վրացի թատրոնասէրների մէջ։ Պ. Ջմշկեանի խաղը անման էր, չը նայելով որ նա դժուարութեամբ էր արտասանում վրացերէն բառերը։—Վրաց թատրոնասէրները գուցէ և այն պատճառով լաւ կատարեցին իրանց դերերը և վրաց հասարակութիւնը հիացած մնաց պ. Սունդուկեանցի պիէսայից, որ ինչպէս յայտնի է «Պէպօ» կոմեդիան ներկայացնում է այնպիսի տիպեր և այնքան աջողակ կերպով է գրած, որ իսկապէս վերաբերում է երկու կովկասեան ազգերի կեանքին հաւասարապէս՝ թէ հայերին թէ վրացիներին։ Սորանով կարելի է մեկնել թէ որքան ճիշդ և իրանց դերի նշանակութեան հասկացողութեամբ խաղացին թէ պ. Կիպիանի (Գիգօ) թէ Կիպիանի և Կազբէկ օրիորդները, թէ պ. պ. Բակրաձէ և Նաթաձէ։ Այս վերջինը լաւ էր մանաւանդ երկրորդ գործողութեան մէջ։—Մենք առիթ ունեցանք ներկայացումից յետոյ լսել հասկացող վրացիներից հետևեալ դատողութիւնները՝ «հայերը կարող են պարծենալ որ այդպիսի թատրօնական պիէսաներ ունեն. այն ազգը որ ունի այդ տեսակ գրվածներ, կարող է համոզված լինել, որ նրա գրականութիւնը մեռնելու չէ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

—

75. Նոյեմբերի 18-ին

Թէ ինչ Աստուած է խառվել Տաճկաստանի կառավարութեանը՝ ձեզ արդէն յայտնի պէտք է լինի։

Փոքր Ասիայի սովը վերջանալուց յետոյ (բայց վերջացա՞ւ) սկսուեցաւ Հերցեգովինիայի ապստամբութիւնը։ Սորան, ասես բնականաբար, հետևում է տաճկահպատակ սլավոնական ազգերի պատերազմական շարժումը։ Այսօր ամբողջ Եւրոպայի մամուլը դորանով է զբաղուած։ Արևելեան խնդիրը նորից երևում է քաղաքական բեմի վրա։

Թէ որքան ընդունակ է Սուլթանի կառավարութիւնը իւր ներքին գործերում, մանաւանդ հպատակ ազգերի վերաբերութեամբ, և թէ ինչ վախճան ունէ Եւրոպայի այդ մահմէտական պետութիւնը՝ ես ոչինչ չեմ ասիլ, միայն առաջ կը բերեմ տեղիս երկու նշանաւոր լրագրների յայտնած իրաւացի կարծիքը։

„La Rèpublique Fraucaise„ և „Journal des Débats“ թերթերը համաձայնուելով իրարու հետ ասում են՝—անկարելի է զէնքով ու զինուորներով երկիրներ կառավարել։ Սուլթանի կայսրութիւնը բոլոր իր հպատակների հետ այդպէս է վարվում։ Եւ այս իսկապէս ոչ թէ կառավարութիւն է, այլ ամեն բանի քանդումը։

Գաւառները և երկիրները զանազան ազգութիւններով կամ, աւելի լաւ է ասել, զանազան ազգերը իրանց հայրենի աշխարհներով կայսրութեան համար ուրիշ բան չեն, եթէ ոչ անտանելի բեռը։ Եթէ Տաճկաստանի կառավարութիւնը կամենում է շահուել, օգուտ քաղել դոցանից՝ պէտք է որ այդ երկիրներին ինքնավարութիւն տայ, հեռացնէ կաշառակեր, հարստահարող տաճիկ պաշտօնեաներին, թոյլ տայ իւրաքանչիւր ազգին, որ ինքը նայէ իր գործերի վրա, ինքը հոգայ իր հայրենիքի բարօրութեան համար։ Այս կերպով Տաճկաստանի պետութիւնը կրկնակի օգուտ կը գոյացնէ.—ինքը տարեկան տուրք ստանալով իր հպատակ երկրներից կը շահուի, իսկ այն ազգութիւնները իրանք առաջ կը դիմեն ամեն կերպով։ Այլապէս անկարելի է վարուել. բոլոր խոստացած վերանորոգութիւնները իսկապէս ցնորք են։ Ելքը միայն ինքնավարութեան մէջ է։

Ի հարկէ այս կարծիքը անխտիր վերաբերում է իւրաքանչիւր տաճկահպատակ ազգին—թէ Եւրոպայի և թէ Ասիայի։

Թողնենք եւրոպական ազգերին։ Նոքա տէրեր ունեն, նոքա իրանք իրանց գործերը յաջողեցնում են։ Եւրոպայի պետութիւնները, աչքերը վառած նայում են նոցա վրա, որովհետև այնքան հեռու չեն։ Եթէ չենք մեռնի՝ կը տեսնենք, թէ ինչ ընթացք կը ստանայ Տաճկաստանի այժմեան խառնակեալ դրութիւնը։

Անցնենք Ասիա, գնանք մեր հայրենի երկիրը. խօսենք փոքր ինչ Հայաստանի մասին։

„La République Francaise“ ազատամիտ լրագիրը, որ ամեն ազգին մի և նոյն աչքով է նայում, որի համար եւրոպական և ասիական և, եթէ կուզէք, աֆրիկական ազգերը մարդկութեան հայեացքի կէտից ոչինչ զանազանութիւն չունեն՝ այսօր հրատարակում է մի նամակ քաղած Կ. Պօլսի „Levant Herald‘ անգլիական լրագրից։ Այդ նամակը, որ ուղղած է անգլիական լրագրին Հայաստանի Մուշ քաղաքից, ֆրանսիական պաշտօնական թերթը արտատպելով, ցաւ է յայտնում Տաճկաստանի անարքիական դրութեան մասին։

Ես էլ ցանկացայ թարգմանել և այնպէս ներկայացնել մեր եղբայրներին վերաբերեալ այդ տխուր տողերը «Մշակի» ընթերցողներին։—Ահա նամակը՝

«Թոյլ տուէք մեզ ձեր պատուական լրագրի միջոցով կառավարութեան ուշադրութիւնը դարձնել Մուշ գաւառի դրութեան վրա։ Հայերը, որ բազմաթիւ են այստեղ, միշտ հարստահարուած են։ Ծանր ու անտանելի հարկերը և հաւաքողների գործ դրած խարդախութիւնները արգելում են գաւառիս երկրագործութեան առաջադիմութեանը, որ տեղիս հարստութեան միակ աղբիւրն է։ Ի զուր կառավարութիւնը երբեմն հրաման է ուղարկում երկրագործութիւնն ու վաճառականութիւնը լաւացնելու համար։ Տեղական իշխանութիւնը չէ ուզում հեռացնել իրանից հին, բռնակալ ձևերն ու վարմունքը և միշտ աչքի առջև ունենալով իւր ցանկութիւնն ու շահը, վնասում է թէ՛ բ. դրան և թէ այս երկրի ժողովրդին»։

«Ապացուցանելու համար մեր ասածը առաջ բերենք փաստեր։ Ամառ ու ձմեռ, երբ զապթիէները (չափարներ, եթէ չեմ սխալվում) գնում են գիւղեր միշտ խեղճ գիւղացիների ծախքով են կերակրվում։ Եթէ յանձն չառնեն այս, իսկոյն կը ծեծեն գիւղերի գլխաւորներին ու քահանաներին։ Եւ երբ մի մարդ գնաց Մուշ գանգատելու այս բռնակալ վարմունքի դէմ, աւելի վատթար։ Որովհետև ոչ թէ արդար դատ է ստանում, այլ ընդհակառակ, դատաւորի զարհուրելի վրէժխնդրութիւնը իր վրա է դարձնում։ Միւլթէզիմները (տասնապետ թշուառականներ) փոխանակ օրէնքով սահմանած բերքի $^1/_8$-ը վերցնելու վարվում են հակառակ օրէնքի։ Նայելով նոցա բարի ցանկութեանը մի գին են նշանակում և կանոնաւոր հարկի տեղ պահանջում են փող։ Ով կարող է նոցա ընդդիմանալ։ Եթէ մենք չը տանք ինչ որ պահանջում են՝ մեր հունձը կը մնայ դաշտում, ուր կարող է ոչնչացնել նորան անձրևը, հրդեհը կամ ուրիշ պատահարը։ Այսպիսի վատ դրութեան պատճառով էր, որ մեր գլխաւորներից մի քանիսը գնացին Էրզրում ընդհանուր կառավարչին բողոքելու համար»։

«Ոչխարների հարկ հաւաքողները անցեալ տարուայ հաշւով են վարվում։ Ի զուր են աղաղակում որ այս տարի շատ ոչխարներ սատկեցան, ոչ ոք չէ լսում։ Մի խօսքով հասարակական պաշտօնեաները հարկ հաւաքելուց աւելի ոչինչ չը գիտեն. երկրիս թէ նիւթական և թէ բարոյական առաջադիմութեան վրա ոչ ոք չէ մտածում։ Սակայն մեր թշուառութիւնը սորանով էլ չէ վերջանում։ Այստեղ կան մի քանի քուրդ բէգեր, որոնք վերջին հացի կտորը խլում են գիւղացու բերանից։ Միրզա-բէգ կոչուած քուրդ նշանաւոր աւազակը մի անգամ քանդեց ու հարստահարեց հիմնովին մի գիւղի բնակիչներին։ Թէպէտ այս յանցանքի համար դատապարտեցին նորան մշտական բանտարկութեան, բայց չանցան քանի մի տարիներ աւազակը փախաւ բանտից և եկաւ Մուշ։ Նորից պատժելու փոխանակ, կարծես, վարձատրեցին նորան. այսօր այդ թշուառականը մեր քաղաքում կայմակամի (հազարապետ) պաշտօն է վարում։ Խեղճ գիւղացիներին դարձրել է իր ստրբուկներ· սոքա են պահպանում նորա անասունները և անթիւ ու անհամար հօտը, սոքա են մշակում նորա դաշտերը ենթարկուելով մի և նոյն ժամանակ հարկին, ուրեմն կրկնակի հարկին։ Որովհետև մի անգամ կառավարութիւնն է առնում և մի անգամ էլ այս բարբարոսը։ Մուշգէղան և Մօզակի գիւղերի բնակիչներից քառասուն ընտանիք (իւրաքանչիւրը բաղկացած 23—26 հոգուց) յուսահատուելով այդպիսի վատ դրութենից թողեցին իրանց ծննդեան օրօրոցը, հայրենի հողը։»

Ընթերցող, մի անգամ էլի կարդացէք Մուշ քաղաքից ուղարկած այդ նամակը, լաւ քննեցէք այդ երկու երեք խօսքերը։ Այդ ինչ դրութիւն է։ Չը խօսենք կեանքի ամեն տեսակ պայմանների անկման մասին։ Գիտենք, որ Տաճկաստանը թէ նիւթապէս թէ բարոյապէս և թէ մտաւորապէս թոյլ է, անզօր հրէշ է։ Գիտենք որ այդ բռնակալ տէրութիւնը իր տմարդ կամքը կատարելու համար մարդիկ է զոհում, ազգեր է ստրկացնում։ Գիտենք, որ դորա պաշտօնեաները անասնաբար են վարվում հպատակների հետ։ Գիտենք որ հարստահարութիւնը, ընտանիքի, սեպհականութեան ու կեանքի յափշտակութիւնը սովորական բան է տաճկական Հայաստանում։ Բայց հայը ինչու է կրկնակի հարկ վճարում։ Ինչու չէ զգում, որ ինքն էլ մարդ է ուրիշ մարդկանց պէս, որ ինքն էլ բնութեան որդի է, որ սեպհական հող ու երկիր ունի և որ ոչ ոք չէ կարող նորանից խլել, որ ոչ ոք չէ կարող նորան ստրկացնել։ Ինչու չէ զգում, ինչու։ ինչու է թողնում իր հողը ու գաղթում։

Չը լինի թէ նորան հաւատացրել են, որ Աստուածը այժմ այդպէս կամենալով մի անգամ վրէժխնդիր կը լինի։ Չը լինի թէ սառեցրել են նորա արիւնը վարդապետների ու քահանաների քարոզներով, թէ բարի արարէք թշնամեաց ձերոց։ Մինչև երբ այսպէս։ Հա՛յ մարդ արա՛ այնքան բարիք քո թշնամուն մինչև որ դու կորչես, անյայտանաս յաւիտեան։ Գուցէ միւս աշխարհում երկնային դրախտին արժանանաս։

Այս ինչպիսի՞ կեանք է։ Ուր են մարդկային ձգտումները։

Շատերը ասում են, որ հայը ամեն տեսակ յատկութեամբ մահմեդականից բարձր է, ուժով է։ Ինչումն է երևում։ Եթէ բարձր է, եթէ ուժով է, ինչու կրկնակի հարկեր է վճարում։ Ինչու է գնացել ստրուկ ու գերի դառել Միրզայ-բէգ բարբարոս աւազակի։

Հայրենի, սեփական երկրում, բնութեան օրօրոցումն էլ անհանգիստ լինել, թշնամիների գերի դառնալ, անհատական պատիւը, մարդու իրաւունքները ոտի տակ գցել տալ։

Բայց նա ինչ անէ։—Ոչ, նորա մեղը չէ։ Մեղաւորները մենք ենք։ Մեղաւորը հայ հասարակութիւնն է։ Մեղը հայոց առաջնակարգ, առաջնորդող մարդկանցն է։

Աշխարհականն ու հոգևորականը, ուսումնականն ու կրօնականը, հարուստն ու վաճառականը, ծերունին ու երիտասարդը ոչ թէ ասել, քարոզել են հային ազնիւ զգացմունքներ, մարդկային արժանաւորութիւններ, ոչ թէ բարձրացրել են նորա ընկած ոգին ու կեանքը, ոչ թէ հասկացրել համոզել են նորան թէ մարդ է, այլ ընդհակառակը։— Մահուան քնով քնեցրել են նորա մէջ զգացմունքների կայծը։ Ծաղրելով նորա ցոյց տուած կենսական երևոյթների վրա, արհամարհել են նորա կեանքի բոլոր նշանները։ Դաստիարակող, օրինակ ցոյց տուող առաջնորդ և ճանապարհ բացող լինելու փոխանակ, իրանք մեռնելով, նորա մէջ էլ սպանել են ամեն տեսակ յոյս։

Քանիցս անգամ խօսք եմ ունեցել եղբայրներիս հետ, քանիցս անգամ իրանց թշուառութիւնների մասին ասել, լսել եմ։ Պատասխանը միշտ այն է եղել, թէ մարդ, առաջնորդ, յոյս տուող չունենք։ Չը կայ մէկը, որ մեզ սիրտ տայ, ուղղութիւն տայ դէպի նորը, դէպի լաւը, դէպի կեանքը։ Ամենքը կտրել են մեզ հետ իրանց յարաբերութիւնները։ Ով մեզ մօտ գտնվում է, ով մեզ խրատում է, եթէ վնաս չէ տալիս, օգուտ չէ բերում մեզ համար։ Աւելի մեռած ենք քան թէ կենդանի։ Բայց ո՞վ գիտէ մեր որդիքը...

Որդիքը՞, այո՛, որդիքը, այո՛, սերունդ պէտք է մեզ հայերիս, սերունդ։ Սիրտը մարդկային զգացմունքներով, հոգին ազնիւ ու պայծառ ձգտումներով լիքը սերունդ պէտք է մեզ։ Գիտութեան հետ կրթութիւն պէտք է մեր սերունդին։ Մեր սերունդը սկզբունքներ պէտք է ունենայ, նա պէտք է լինի ու աշխատէ միշտ մարդկութեան անդամ լինել, ազգութիւն ու հասարակական կեանք կազմել։

Երբ որ մենք կունենանք պատրաստի սերունդ, երբ որ մեր սերունդը կունենայ մշակուած, անշարժելի սկզբունքներ, այն ժամանակ (աւա՜ղ այն ժամանակ միայն) էլ չենք տեսնիլ յաւիտենական աշխարհի քաղաքականութեամբ զբաղուող ազգային վարչութիւններ, էլ չենք ունենալ այնպիսի թոյլ, անկարող անդամներ, էլ չենք ունենալ այդպիսի անգոյն, անշնորհ հայ հասարակութիւն։

Այլ ևս չենք լսիլ դատարկ խօսքեր, այլ գործ կը տեսնենք, այլ ևս չենք ունենալ անպիտան, վնասակար առաջնորդներ, այլ անձնուէր մարդիկ կունենանք, այլ ևս եսական, անձնական շահերով չենք հետաքրքրուիլ, չենք կուրանալ, այլ ընդհանրութեան համար կը զոհուենք։

Այն ժամանակ մի կողմից յիմար, բիւզանդական լուրեր էլ չենք կարդալ, թէ այս ինչ հայ պարոնները հայերէն են խօսում, կամ ուրիշները հրաշագործութիւններ են անում, իսկ միւս կողմից էլ չենք տեսնիլ տպած այդպիսի ցաւալի նամակներ Հայաստանից։ Այն ժամանակ հայը պաշտպանելով իր բոլոր սուրբ սեպհականութիւնները, իր իրաւունքն ու արժանաւորութիւնները էլ չի սպասիլ Իսրայէլի Աստուծուն, այլ ինքը Միրզայ-բէգ բարբարոսների պէս մարդկանց գերի չը դառնալով, կապրէ և կեանք կունենայ։

Ուրեմն սերունդ պատրաստենք հայեր, սերունդ։

Ցարդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նոյեմբերի 27-ին ֆրանսիական ազգային ժողովը պիտի ձեռք տայ 75 սենատօրների ընտրութեանը։

—Հեռագիրը հաղորդում է որ Նոյեմբերի 28-ին ընտրված են երկու սենատօրներ՝ Օդիֆրէ-Պակիէ և Մարտէլ։ Այն ցուցակը որ ներկայացրեց ձախ կողմը աւելի ձայներ ստացաւ, քան թէ աջ կողմի ներկայացրած ցուցակը։

—Deutschland անուանված շոգենաւը, որ Եւրոպայից Ամերիկա գաղթականներին էր տանում, նաւաբեկութեան ենթարկվեցաւ։ Յիսուն հոգի ճանապարհորդներից կործանվեցան։

—Köln. Zeitg. լրագրին հաղորդում են Վիէննայից որ կարդինալ Րաուշէր Նոյեմբերի 24-ին վախճանվեցաւ։

—Նոյն լրագիրը հաղորդում է որ կղերական կուսակցութիւնը Իտալիայում որ մինչև այժմ քաղաքական ասպարէզից իրան հեռու էր պահում, նորերումս մի քաղաքական պրօգրամ հրատարակեց, հանդէս դուրս գալով վերջապէս քաղաքական ասպարէզը, յայտնելով որ պէտք է ներգործել սկսէ թէ գաւառական թէ քաղաքային ընտրութիւնների վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ամիսներին Կ. Պօլսեցի մի հայ երիտասարդ պ. Շաշեան, ներկայացնելով իր շարադրութիւնը Փարիզի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտին, արժանացաւ դօկտօրի գիտնական տիտղոսին։ Շարադրած գրքի վերնագիրն է—Du caractére et des conditions constitutives du mariage (Ամուսնութիւն կազմող բնաւորութեան և պայմանների մասին)։

⁂

Լսում ենք որ մեր քաղաքի մի քանի գործակատարներ դիտաւորութիւն ունեն Թիֆլիսում գործակատարների մէջ մի ընկերութիւն կազմել, որի նպատակը կը լինի անդամների միմեանց մէջ փոխադարձ օգնութիւն տալու, հիմնելով մի խնայողական գանձարան։ Մեր կողմից ցանկանալով աջողութիւն այդ գործին, յոյս ունենք որ մեր գործակատարները կը շտապեն մասնակցել այդ ընկերութեանը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աչքի առաջ ունենալով, որ մեզ մօտ պէտք է մտցնվին յունվարի 1-ից առևտրական վերանորոգութիւնները, ուրեմն և պարտաւորութիւնը բոլոր վաճառականների համար, համաձայն 517 յօդ. վաճառականական կանօնագրութեան, առևտրական գրքեր պահելը յայտնի ձևով, դեկտեմբերի 12-ից բացվում են ընդհանուր մատչելի ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ տեսական և գործնական, հասարակ և կրկնաթիւ կամ իտալական ԳՐԱՊԱՀՈՒԹԵԱՆ (բուխգալտերիա)։

Դասախօսութիւնները շարունակվելու են 3 ամիս և լինելու են երեկոյեանները։

Վճարը ամբողջ կուրսին 35 մանէթ։

Գործնական մասը սովորողները կարող են պարապել ինչպէս տեղական, այնպէս էլ եւրոպական լեզուներով։

Ցանկացողներին խնդրում ենք դիմել առաւօտեան 10 ժամից մինչև 1-ը Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկը, իսկ կէս օրից յետոյ 4 ժամից մինչև 5 իմ բնակութեան տեղը, ԼԱԲՕՐԱՏՕՐՆԻ փողոցում փոխարքայի պարտէզի դէմուդէմ Տ. Պտարովի տանը։

Խ. Խաչատուրեան

1 (2)

Թիֆլիսի ՋՈՒՂՈՒՐԷԹ թաղում Սբր. Աստուածածնի եկեղեցու մօտ ԾԱԽՎՈՒՄ Է Ստէփան Բաբէէվի ՏՈՒՆԸ, 51 կվադրատնի սաժէնի վրա շինած, հինգ սենեակից բաղկացած, ունի սարդափ և երկու խանութ։ Պայմանների մասին նոյն տեղ հարցնել։

2 (3)

Երկուշաբթի 8-ին դէկտեմբերի լինելու է հայ-ներկայացումն ամառային թատրօնում յօգուտ պ. Գ. Ջմշկեանի «Վէնետիկի վաճառական կամ Հրէա», «Երկուսս էլ քաղցած ենք» և «Ստիպուած ամուսնութիւն»։ Տոմսակները վաղօրօք ծախվում են պ. Պէտրօվսկու մօտ, թատրօնի կասսում և պ. Ծատուրեանցի լամպի մաղազինում։

Գ. Ջմշկեան

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՏԱՄՆԵՐ

Վուլկանիզած Կաուտշուկի վրա, առանց մետալի։ Գինը ամենի համար մատչելի։ Ընդունելութիւնը ամեն օր ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրօսպեկտի վրա, Դօբրժանսկու տան Ֆլիգելում, որտեղ է Փրիդօնօվի մագազինը։ Նոյնտեղ կարելի է ստանալ և ԷԼԻԿՍԻՐ և ԱՏԱՄՆԱՓՈՇԻ ատամները խնամելու համար։

Ա. ԻՎԱՆՕՎ

6 (6)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4.

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԹԻՖԼԻՍ. 1875.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Դեկտեմբերի 3-ին)

	Ր.	Կ.
Ոսկի (պօլուիմպերիալ)	6	15
Բամբակ Երևանու	5	40
" Ամերիկայի սերմից	6	30
Բուրդը թուշի	7	50
" թարաքամի	—	—
Շաքարը ռուս (բրօցկու)	7	80
" միւս տեսակը	7	60
" զազրան. տրանգիտ	4	75
" մաքուր վճարած	7	60
Շաքարաւազը Ռուս	6	40
Ղահվա Լիվանի լաւը	18	—
" Մոկօ շատ լաւը	19	25
" Մարտինիկօի ցածր	13	—
Ալիւրը Երևանի	—	80
Ալիւրը Գեանջու հասարակ	1	—
" Շորագեալու	—	90
Գարին	—	55
Մոմ	10	20
Փոխանակագիր Պօլսի	6	90
" Գավրէժի	4	50
Լօնդօնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ	7	59
Մարսէլ և Փարիզ $332\frac{1}{7}$ ֆ. արժէ	100	

ՀՆՈՒԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի գլխաւոր քաղաքները	1	
Նոր-Նախիջևան	1	
Մօսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նօվգօրօդ	2	
Աւստրիա	2	75
Անգլիա	3	75
Գերմանիա	2	63
Թիւրքիա	3	
Ֆրանսիա	3	50

ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից Փօթի (ամառը) հինգշաբթի ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փօթիից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսաից Փօթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին։

Փօթիից Օդեսա հինգշաբթի առաւօտեան։

Փօթիից Կ. Պօլիս երկուշաբթի առաւօտները։

Կ. Պօլսից Փօթի կիրակի առաւօտները։

(Ուղղակի գիծ)

Օդեսայից Փօթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրի։

Փօթիից Օդեսա Շաբաթ 8 ժամ. առաւօտ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 36 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 4 ժամ. 54 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 36	4. 54
Գորի	12. 32	9. 11
Միխայլօվօ	2. 15	11. 25
Քութայիս	8. 33	
Փօթի	11. 44	

	առաւօտ.	
Փօթիից	8. 40	
Քութայիս	11. 59	
Միխայլօվօ	5. 56	1. 06
Գորի	7. 33	3. 36
Թիֆլիս	10. 16	7. 24

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գորի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրօպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան) Օզուրգէթ, Ախալցխայ, Բէլի Կլիւչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փօստ)։

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փօստ)։ Նուխի (Ցարսկի Կօլօդցի, Զաքաթալ, Սղնախ, Թէլաւ, Լագօդեխ) թեթև փօստ։

Չորեքշաբթի

Երևան, (Ջուլֆ, Ալէքսանդրապօլ, Նոր-Բայազեդ) Զուգդիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապօլ) Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի Կլիւչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փօստ)։

Շաբաթ

Նուխի, (Ցարսկ. Կօլօդ. Զաքաթ. Սղն., Թէլաւ).

Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու կէտեր ամեն օր, բացի կիրակի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կօպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա	13
Անգլիա	8
Շվէյցարիա	8
Թուրքիա (Կ. Պօլիս	20
Թիւրքիա (ցամաք)	20
Իտալիա	8
Ամէրիկա	28
Պարսկաստան	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր, երկու անգամ օրը։

Թիֆլիսից Պիատիգօրսկ, և Ստավրապօլ հինգշաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

(Նոյեմբերի 29-ին)

Լօնդօն մի րուբլ արժէ $31\frac{7}{8}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։

Փարիզ մի րուբլ արժէ 334 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին 5% փոխառութեան տոմսակ	226
Երկրորդ	$217\frac{3}{4}$
5% բանկի տոմս. 1 շրջանի	$100\frac{1}{4}$
" " " 2 "	100
" " " 3 "	—
5% ռէնտա	$103\frac{1}{4}$
Ազով-Դօնի բանկի ակցիաներ	—
Օդէսայի Առևտր. բանկի ակցիաներ	—
Ս. Պետերբուրգի քաղաքային կրեդիտի ընկերութ. օբլիգացիաներ	$92\frac{1}{2}$

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Երևան. Վ. Ե. Ստացանք 25 րուբլ «Մշակի» տարեկան վճարը, որոնցից 20 րուբլ գիտենք ում համար, իսկ 5 րուբլ չը գիտենք։ Գուցէ դուք ուզում էիք կանխիկ վճարել ձեր համարը եկող տարվայ համար։

—Ներքին-Ագուլիս. Պ. Ա. Շնորհակալ ենք ձեր տուած խորհրդի համար, բայց եկող թւին ոչինչ փոփոխութիւն անել չենք կարող։ Կարելի է միւս տարի... այն էլ բոլորովին այլ պայմաններով։

Дозволено цензурою 3 Декабря 1875 г. Тифлисъ
Типографія Меликова
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ